ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81

N 51

31 հունվար 2020թ.

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թադևոսյան.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 30-ի թիվ 01 արտահերթ նիստի ավագանու՝ թիվ 01-Ա և 02-Ա որոշումները:

Առդիր՝ 4 /չորս/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Կատ.՝ Աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ՝ Մ.Ավետիսյան

094873797

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
00941
«04» 02 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajaran.syunik@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 01-Ա

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով և 14-րդ հոդվածով, Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին *որոշում է*

1 Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ուղերձ հղելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԷՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

30 Հունվարի 2020թ. Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajaran.syunik@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 02-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՈՒՂԵՐՁ ՀՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով և հաշվի առնելով Քաջարան համայնքի ավագանու անդամների առաջարկությունները՝ Քաջարան համայնքի ավագանին *որոշում է.-*

1. Ուղերձ հղել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին՝ համաձայն հավելվածի 1-ի/:

2.Հանձնարարել Քաջարան համայնքի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ՝ Մ. Ավետիսյանին ուղերձի պատճեն ուղարկել ՀՀ Սյունիքի մարզպետարան և ՀՀ Առողջապահության նախարարություն:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԷՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

30 Հունվարի 2020թ., Քաջարան

Հավելված 1

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի

ավագանու 2020թվականի հունվարի 30-ի թիվ 02-Ա որոշման

ՈՒՂԵՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի գործընկերներ

Ձեզ են դիմում ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու անդամները՝ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի «Քաջարանի ԲԿ»-ի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի ծառայությունների կասեցման վերաբերյալ:

Քաջարանի ԲԿ-ն հիմնադրվել է 1975թ.-ին Քաջարան քաղաքում:Հիմնադրման օրվանից Քաջարանի ԲԿ-ն մատուցել է հետևյալ բժշկական ծառայությունները՝ ընդհանուր վիրաբուժություն, ներքին բժշկական /ընդհանուր թերապևտիկ/, մանկաբարձական, գինեկոլոգիական, լաբորատոր-ախտորոշիչ:

Ներկայումս ավելացվել են հետևյալ ծառայությունները՝ նյարդաբանական, անեսթեզիոլոգիական, ախտաբանանատոմիական:

Ստեղծման օրվանից բարձր մակարդակի վրա է գտնվում Քաջարանի ԲԿ-ի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի մասնագետների պատրաստվածությունը:

2012-2013 թվականներին Քաջարանի «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից Բժշկական կենտրոնը վերանորոգվել և վերազինվել է գերժամանակակից բժշկական սարքավորումներով: Բժշկական կենտրոնի յուրաքանչյուր բաժանմունք ունի համապատասխան բուժանձնակազմ՝ համապատասխան մասնագիտական հմտություններով:

Հաշվի առնելով խոշորացված համայնքի բնակիչների մտահոգությունը, համայնքի ավագանին հանդիպումներ ունեցավ բնակչության հետ և այժմ ներկայացնում ենք բնակիչների պահանջները՝

1. ՀՀ-ում իշխանության լեգիտիմության աղբյուրը ժողովուրդն է: Ավագանիների ազատ մանդատի էությունն այն է, որ ներկայացնում ենք ոչ թե ընտրողների, այլ ընդհանրական սուբյեկտին՝ ժողովրդին, ում կամքը գերակա է պետական իշխանության կամքի նկատմամբ, որպես ժողովրդի վստահությամբ պայմանավորված և նրա խոսքի իրավունքի միջնորդ՝ տեղական ինքնակառավարման մարմինը ներկայացնում է Ձեզ, որ Քաջարան համայնքը համարվում է խոշոր արդյունաբերական համայնք: Պետությունը փորձում է մի ողջ համայնքի ժողովրդի ճակատագիր որոշել, որոնք առաջացրել են բնակչության արդարացված մտահոգություններ:

2. Քաջարանի բժշկական կենտրոնի բուժօգնության բարձր տեխնիկական հագեցվածությունը թույլ է տալիս հայտարարել, որ այլ համայնքների բնակչության սպասարկումը նույնպես հանդիսացել է ԲԿ դիմելու առանձնահատուկ առիթ: Փաստորեն այդ նույն ժողովրդի իրավաչափ պահանջը չկատարելու արդյունքում, մենք ավագանիներս՝ մեր գործառույթը կհամարենք ավարտված:
3. Տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ Քաջարանի համայնքապետարանի և «ՀՊՄԿ» ՓԲԸ-ի համատեղ իրականացնելու են բնակարանաշինարարություն, որը կստեղծի հավելյալ աշխատատեղեր, կլինի ներգաղթ, բնակարաններ կհատկացվեն երիտասարդ ընտանիքներին:
4. Տեղեկացնում ենք նաև, որ պետությունը ֆինանսավորում է Քաջարանի ԲԿ-ի ծախսերի ընդամենը՝ 38 %-ը, իսկ մնացած 62%-ը վճարում է Քաջարանի «ՀՊՄԿ» ՓԲԸ-ն և ԲԿ-ն:
5. Քանի որ Քաջարան-Կապան համայնքների միջև հորիզոնական տարբերությունները 1200 մետր է, ուստի չենք կարող թույլ տալ որ հղի ծննդկանը նման ճնշումային տատանումներով տեղափոխվի Կապան համայնք, նշենք ավելին՝ խոշոր հանքարդյունաբերական ընկերությունը ապահովվագրված չէ արտադրական պատահարներից:Քաջարանի ԲԿ-ի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի գործունեության հետագա ճակատագիրը ծանրակշիռ փաստարկներով ենթադրում է նորմատիվ պարտադրանք, ուստի լիահույս ակնկալում ենք Ձեր աջակցությունը: